




COVID-19. Փաստեր Պատվաստման Մասին

Վերարտադրողականություն և Դաշտանային Ցիկլ


COVID-19 ԵՎ Վերարտադրողական Առողջություն



- **Չկա որևէ ապացույց**, որ որևէ պատվաստանյութ, ներառյալ COVID-19-ի դեմ պատվաստանյութերը, առաջացնում են պտղաբերության հետ կապված խնդիրներ կանանց կամ տղամարդկանց մոտ: Իրականում, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատվաստված մարդկանց մոտ հղիանալու ցուցանիշները նույնն են, ինչ չպատվաստվածների մոտ: Չկա նաև ապացույց, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերը ազդում են սեռական հասունացման կամ դեռահասների զարգացման վրա:
- Բժիշկ-փորձագետները **խորհուրդ են տալիս պատվաստել COVID-19-ի դեմ** այն մարդկանց, որոնք ցանկանում են ապագայում երեխա ունենալ, ինչպես նաև այն մարդկանց, որոնք ներկայումս հղի են:
- Փորձագետները նաև **խորհուրդ են տալիս բոլորին ժամանակին ստանալ COVID-19-ի դեմ պահանջվող պատվաստանյութերը**: Սա հատկապես կարևոր է այն մարդկանց համար, որոնք փորձում են հղիանալ կամ արդեն հղի են: COVID-19-ը կարող է ավելի վատ ընթանալ հղիության ընթացքում: Հղիության ընթացքում COVID-19-ով վարակվելը մեծացնում է հղիի, ինչպես նաև նրա զարգացող պտղի համար բարդությունների վտանգը:

ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՎՈՐ ԱՉԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՇՏԱՆԱՅԻՆ ՑԻԿԼԻ ՎՐԱ

- Որոշ կանայք հայտնել են իրենց դաշտանային ցիկլում փոփոխությունների մասին COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո: Այս հարցի վերաբերյալ կան սահմանափակ հետազոտություններ, սակայն վերջին երկու ուսումնասիրությունները ցույց են տվել ընդհանուր, սակայն աննշան փոփոխություններ COVID-19-ի դեմ պատվաստումից հետո: Դրանք ներառում էին դաշտանային ցիկլի տևողության և ցիկլերի միջև ընկած ժամանակահատվածի փոփոխություններ, ինչպես նաև սովորականից ավելի ուժեղ արյունահոսություն: Այս **փոփոխությունները եղել են ժամանակավոր**:
- Կարևոր է հիշել, որ շատ բաներ կարող են հանգեցնել դաշտանային ցիկլերի փոփոխության, իսկ անկանոն ցիկլերը շատ տարածված են դեռահասների շրջանում: Եթե մտահոգություններ ունեք կապված ձեր դաշտանային ցիկլի հետ, խոսեք բժշկի հետ:



Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս CDC-ի՝ [COVID-19-ի դեմ Պատվաստումն Այն Մարդկանց Համար, Որոնք Ցանկանում Են Երեխա Ունենալ](#) կայքէջը:

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆ ԱՆՎՃԱՐ Է ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ, նույնիսկ եթե չունեք ապահովագրություն

Ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին: Լուս Անջելեսի Շրջանում կան բազմաթիվ պատվաստման վայրեր. շատերը գործում են հանգստյան օրերին և երեկոյան ժամերին և ժամադրություն չեն պահանջում: Ձեր տարածաշրջանում պատվաստման վայր գտնելու համար՝

- Այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinatelacounty.com) կայքէջ կամ զանգահարեք **833-540-0473** հեռախոսահամարով առավոտյան 8-ից երեկոյան 8:30-ը:
- Կարող եք նաև զանգահարել 2-1-1 կամ հարցնել ձեր բժշկից կամ տեղամասային դեղատան աշխատակցից:
- Նաև հասանելի են անվճար փոխադրման և տնային պատվաստման ծառայություններ:

